

Մամլո հաղորդագրություն

2021թ.-ի փետրվարի 18-ին «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ն անցկացրեց եզրափակիչ վեբինար՝ կիսելու ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի (UNDEF) կողմից ֆինանսավորված «Կանանց հնարավորությունների ընձեռում՝ Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարման գործընթացին մասնակցության համար» ծրագրի իրականացման փորձը: Վեբինարի թեման էր «Կանանց մասնակցության փորձը ԱԵԿԿԱ տարածաշրջանում ջրի կայուն կառավարման ոլորտում»: Վեբինարին մասնակցում էին Ուկրաինայի, Մոլդովայի, Կիրգիզիայի, Տաջիկստանի և Բուլղարիայի ՀԿ-ների, «Կանայք՝ հանուն ջրային համագործակցության» (WfWP) միջազգային կազմակերպության (Նիդերլանդներ), ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Ջրի և առողջության մասին» արձանագրության քարտուղարության, ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի քարտուղարության, Արարատի, Արմավիրի, Շիրակի և Լոռու մարզերի համայնքների, տեղական ՀԿ-ների և ԶԼՄ ներկայացուցիչներ:

ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ի նախագահ Ելենա Մանվելյանը, ողջունելով մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամին ֆինանսական աջակցության և խորհրդատվության, ինչպես նաև Արարատի և Արմավիրի մարզերի ծրագրային համայնքների ղեկավարություններին և կանանց՝ ծրագրի իրականացմանն ակտիվ մասնակցության համար:

Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ) տարածաշրջանը ներկայացնող ՀԿ-ները և փորձագետները հանդես եկան զեկույցներով և կիսվեցին իրենց փորձով ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության, սակագնային մեխանիզմների, ոռոգման ջրային պաշարների կառավարման և մշտադիտարկման գործում համայնքաբնակ կանանց ներգրավման, ծրագրի իրականացման ընթացքում համավարակի մարտահրավերներին ՀԿ-ների արձագանքների վերաբերյալ քննարկումներում: